

Երանիները / The Beatitudes

Մատթեոս 5: 6-8, Ղուկաս 6: 20-23
Greek. Makarioi oi; Latin, Vulgate: Beati

Մտթ. 5:6 - Երանի անոնց, որ քաղց ու ծարաւ ունին արդարութեան, որովհետև անոնք պիտի յագեանան:

Երանիները, երկնքի արքայութեան մասին Յիսուսի կատարած քարոզութեան ամենաէական վարդապետութիւններէն մէկը կը հանդիսանան՝ ուղղուած իր աշակերտներուն, պատրաստելու համար անոնց հոգիները եւ դարձնելու “մարդկանց որսորդներ” (Մտթ. 4:19): Երանիները թէև ինն են թիւով, սակայն հոգևոր պատգամի եւ վարդապետութեան իմաստով զիրար կը լրացնեն եւ իրենց մէջ կը խտացնեն երկու կարևորագոյն ըմբռումներ. Ա - Աստուծոյ առաջ ծառայութեան կոչուած Քրիստոսի առաքեալին հոգևոր վիճակն է, թէ առաքեալը կամ Տիրոջը ծառայողը Երանի պիտի կոչուի եթէ ըլլայ հոգիով աղքատ, սգաւոր, հեգ, քաղց ու ծառաւ ունենայ արդարութեան, ողորմած ըլլայ ու խաղաղարար, հալածուի ու նախատուի Տիրոջը համար. Բ - Իր կամովին ընդունած վիճակին եւ հոգևոր առաքինութիւններուն դիմաց ծառային ստանալիք երկնային պարգևներն են. ան երկնքի արքայութիւնը պիտի ստանայ, պիտի մխիթարուի, երկիրը պիտի ժառանգէ, ողորմութիւն պիտի գտնէ, զԱստուած պիտի տեսնէ եւ երկնքի մէջ վարձք պիտի ունենայ:

Ստեփանոս Միւնեցիին կ'ըսէ, “քաղց եւ ծարաւ կ'ըլլայ կենդանիներու մարմիններուն, որոնք այդ պակասութիւնը կը լեցնեն կերակուրով եւ ըմպելիով,

բայց Աստուծոյ Միածին Որդին այդպիսի քաղցեալներուն երանիներ չտուաւ, այլ անոնց, որոնք կը տենչան արդարութեան հասնիլ եւ այդ կերակուրներով (երանիներով) կը փութան կերակրել իրենց հոգիները: Այդպիսիներն են իրաւապէս Երանի, որովհետեւ ձգելով իրենց մարմնական կերակուրներու հանդէպ ունեցած ցանկութիւնը, կը բաղձան արդարութեան ճշմարիտ կերակուրին՝ *(Մեկ. Չորից Աւետարանչացն, էջ 30)*: Յիսուս ըսաւ, *“Գրուած է, մարդ միայն հացով չապրիր, այլ ամէն իօսքով, որ դուրս կուգայ Աստուծոյ բերանէն” (Մտթ. 4:4)*:

Յիսուս Իր քարոզութիւնը կատարեց այնպիսի քաղաքական ու պատմական ժամանակներուն մէջ, երբ Հռոմէական Իշխանութիւնը կը տիրէր ամբողջ Պաղեստինի վրայ: Փարիսեցիներ կը ջանային Մովսիսական Օրէնքի տատը պահպանել, Սադուկեցիներ, ի տարբերութիւն Փարիսեցիներու, միայն գրուած օրէնքին կը հաւատային ու կը մերժէին բանաւոր աւանդութիւնները, հոգիի ու հրեշտակներու գոյութիւնն ու յարութեան խորհուրդը: Սադուկեցի կը նշանակէր *“Արդար ըլլալ”*: Նախանձայոյզները, (The Zealots) որոնք զինուորական խմբակ էին, իրենց երկրի ազատութեան կը ձգտէին, իսկ Էսսենները կ'սպասէին Մեսիայի մը, որ արքայութիւնը պիտի հաստատէր երկրի վրայ եւ Իսրայէլացիներուն պիտի ազատէր տիրապետութենէ: Հրեական այս ուղղութիւններուն մէջ կը տեսնենք թէ, որքան անհարազատ եւ անցանկալի պիտի հնչէր Յիսուսի քարոզութիւնը Աստուծոյ արքայութեան եւ հոգիի փրկութեան մասին, երբ իւրաքանչիւր Հրեական ուղղութիւն իւր հաւատալիքն ու սպասելիքը ունէր:

Հին Կտակարանի մէջ (Ելից 20) Մովսէս լերան վրայ բարձրացաւ Աստուծմէ ստանալու համար տասը պատուիրանները: Նոր Ուխտի մէջ Յիսուս Ինք տուաւ Երանիները իր առաքեալներուն, եւ, ի տարբերութիւն Տասնաբանեային, որ իբրև

խստագոյն օրէնք տրուեցաւ անհնագանդ հրեաներուն, Երանիները տրուեցան իբրև պատգամ եւ ուսուցում՝ գործադրուելու անոնց կողմէ, որոնք կը ցանկան Աստուծոյ արքայութիւնը ժառանգել, Աստուծոյ որդիներ կոչուիլ, զԱստուած տեսնել եւ երկնքի մէջ վարձք ունենալ: Մովսէսի օրէնքները գրուած էին քարեղէն տախտակներու վրայ, իսկ Յիսուս Իր խօսքը կը գրէր մարդոց սիրտերու տախտակներուն վրայ, ինչպէս Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն պիտի գրէր. “Յայտնի էք իբրև Քրիստոսի թուղթեր՝ մեզմէ հոգացուած եւ գրուած ոչ թէ թանաքով, այլ կենդանի Աստուծոյ խօսքով, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, այլ սրտի մարմնեղէն տախտակներու վրայ” (2 Կորնթ. 3:3):

Քրիստոսի պատգամը՝ ողորմածութեան, արդարութեան քաղցն ու ծարաւը ունեցողին ու խաղաղարարին պիտի բերէր հոգևոր կերպարանափոխութիւն, աստուածտեսութիւն եւ փրկութեան վարձ երկնքի մէջ: Ս. Գրիգոր Նիւսացի յրեանիներու մասին կը գրէ, “Երանին ունեցուածք է բոլոր բաներու, որոնք բարի են, որոնցմէ ոչ մէկ բան պակաս է, որ բարի ցանկութիւն մը կը բաղձայ: Գուցէ, Երանիին իմաստը աւելի յստակ կ’ըլլայ մեզի համար, եթէ այն բաղդատուի իր հակառակին հետ: Արդ, Երանիին հակառակը թշուառութիւն է. թշուառութիւն կը նշանակէ տառապիլ կամքի հակառակ ցաւալից տանջանքներով”:

Մտք. 5:7 - “Երանի ողորմածներուն, որովհետև անոնք ողորմութիւն պիտի գտնեն”:

Օրմանեան, անդրադառնալով Երանիներուն՝ կ’ըսէ թէ, “Ողորմածներ են ուրիշին օգնելու եւ կարօտին պէտքը լեցնելու աշխատողներ: Արդարութիւն սիրողներ, կամ Աւետարանի բառերով, արդարութեան անօթութիւնն ու ծարաւը զգացողներն են,

միմիայն ուղղութիւնը իրենց նպատակ ունեցողները: Իսկ արդարութեան համար հալածուածները անոնք են, որոնք ոչ միայն բարին կը գ ործեն եւ ճշմարտութեան կը հետևին, այլ հակառակութեանց առարկայ կը դառնան” (*Նամայում. 60*):

Ողորմածի կերպարը կը տեսնենք Նարիւրապետ Կոռնելիոսի մէջ. Ղուկաս Աւետարանիչ կը գրէ, “Ան իր ամբողջ ընտանիքով բարեպաշտ եւ աստուածավախ ըլլալով՝ շատ ողորմութիւններ կ’ըներ ժողովուրդին մէջ եւ միշտ Աստուծոյ կ’աղօթէր: ...Տիրոջ հրեշտակը ըսաւ անոր, քու աղօթքներդ ու ողորմութիւններդ յիշատակուելով Աստուծոյ առաջ բարձրացան” (*Գործք 10:4*):

Սաղմոսերգուն կ’ըսէ, “Գթասիրտ եւ ողորմած է Տէրը, համբերատար ու ողորմաշատ” (*Մղմ. 102:8*): Իսկ ուրիշ առիթով Ելից Գիրքին մէջ կը կարդանք, թէ Տէրը կ’իջնէ ամպերու մէջ եւ կը կանգնի Մովսէսին քով ու կ’ըսէ, “Տէր, Տէր, ողորմած եւ գթած Աստուած, համբերատար, բարեգութ եւ ճշմարիտ, որ արդարութիւն կը պաշտպանէ եւ ողորմածութիւն կը ցուցաբերէ հազարաւոր սերունդներու հանդէպ” (*Ելից 34:6-7*): Ողորմած ըլլալ, սակայն, չի նշանակեր արդարացնել չարութիւնն ու մեղքը, եւ կամ համաձայն գտնուիլ մարդկային կեանքին մէջ տեղի ունեցող անընդունելի արարքներուն ու անոնց հեղինակներուն հետ: Ողորմութիւն տուողը անշահախնդիր կերպով եւ մարդկանց կողմէ վարձատրուելու ակնկալիքը չունեցող սիրտով իր ողորմութիւնը պէտք է մատուցէ կարօտեալին: Ողորմութիւն տուողը պէտք է հոգևորապէս գիտակցի, որ ինքն եւս ողորմութեան կարիքն ունի, այնպէս, ինչպէս “Նայր Մեր”-ի մէջ կ’աղօթենք ըսելով, “Եւ թող զմեզ զպարտիս մեր, որպէս եւ մէք թողունք մերոց պարտապանաց”:

Ամէն Քրիստոնեայ խոնարհաբար պէտք է կարենայ ընդունիլ, թէ ինք կատարեալ չէ, իսկ եթէ հպարտութեամբ ըսէ, թէ ինք անմեղ է, Յովհաննէս Առաքեալ կը յիշեցնէ

ըսելով, “Եթե ըսենք, մենք ոչ մէկ մեղք չունինք, մենք մեզի կը խաբենք, եւ ճշմարտութիւն չիկայ մեր մէջ: Իսկ եթե խոստովանինք մեր մեղքերը, ան հաւատարիմ է եւ արդար՝ մեր մեղքերը մեզի ներելու եւ մաքրելու մեզի ամէն անարդարութենէ: Եթե ըսենք չենք մեղանչած, սուտ կ’անուանենք զինք եւ անոր խօսքը մեր մէջ չէ” (1 Յով. 1:9-10):

Սբ. Ներսէս Շնորհալիւն իր “Նաւատով խոստովանիմ” աղօթաշարի իւրաքանչիւր տունին վերջաւորութեան պիտի ըսէր, “Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս”: Իսկ Դաւիթ Մարգարէն պիտի սաղմոսէր, “Աստուած, ողորմէ մեզի եւ օրհնէ, ցոյց տուր երեսդ եւ գթա մեզի” (Մղմ. 66:1-2): Ուրիշ առիթով Մարգարէն պիտի ըսէր, “Քու ողորմութիւնդ, Տէր, պիտի հեռուի ինձի կեանքիս բոլոր օրերուն” (Մղմ. 22:7): Իսկ Աստուածածինը օրհներգելով Տիրոջը, կ’ըսէ, “Անոր ողորմութիւնը իր երկիւղածներուն վրայ է սերունդէ սերունդ” (Ղուկ. 1:50):

Մտք. 5:8 - “Երանի անոնց, որ սիրտով մաքուր են, որովհետև անոնք զԱստուած պիտի տեսնեն”:

Ստեփանոս Սիւնեցիւն կ’ըսէ, “Անոնք որոնք հոգեղէն սիրտով սուրբ են եւ մաքրուած բոլոր աղտերէ, այդպիսիները մարգարէութենէ չեն հեռանար. իսկ մարգարէները հոգւոյն աչքերով զԱստուած կը տեսնեն” (Մեկ. Չորից Աւետարանչացն, էջ 31):

Յիսուս ըսաւ, “Մարմնի ճրագը աչքն է, եթէ քու աչքդ պարզ է, քու ամբողջ մարմինդ լուսաւոր կ’ըլլայ: Իսկ եթէ աչքդ պղտոր է, ամբողջ մարմինդ խաւարի մէջ կ’ըլլայ, եւ եթէ քու մէջդ եղած լոյսը խաճար է, ապա որչափ մեծ է խաւարը”:

Հին Կառակարանի մէջ հրեաներ, որպէսզի կարենային պաշտամունք կատարել եւ ողջակէզներ մատուցել Տիրոջը, պէտք է լուացուէին մաքրուելու համար (*Ելից 30:17-21*) եւ ապա մտնէին Տիրոջ խորանը եւ գտնուէին Աստուծոյ ներկայութեան: Ի տարբերութիւն Հին Ուխտի լուացման եւ մարմնական մաքրման օրէնքներուն, որոնք խստութեամբ պէտք է գործադրուէին, Յիսուս Իր շեշտը կը դնէ սրտի մաքրութեան վրայ եւ մաքուր սիրտ ունեցողին կը վարձատրէ աստուածտեսութեամբ: Սաղմոսերգուն աղաչանքով կ'ըսէ, "Մէկ բան կը խնդրեմ Տիրոջմէն եւ նոյնը կ'աղաչեմ, որ կեանքիս բոլոր օրերը բնակուիմ Տիրոջ տունը, լսեմ իմ ձայնը, Տէր, քանզի քեզի կանչեցի, ողորմէ ինձի եւ ականչ դիր, քանզի իմ սիրտը քեզի դիմեց, եւ իմ հայեացքը փնտրեց, փնտրեց քու երեսդ, Տէր" (*Սղմ. 26:4,7-8*):

Ինչպէս Սբ. Գրիգոր Նարեկացին իր պաղատագին աղօթքներով պիտի ցանկար զԱստուած տեսնել, նոյնպէս եւ սաղմոսերգուն կը ցանկայ Աստուծոյ տունին մէջ բնակիլ եւ Աստուծոյ երեսը կը փնտրէ: Ան որ զԱստուած կուգէ տեսնել, պէտք է ունենայ մաքրամաքուր սիրտ եւ հոգոյ աղքատութիւն՝ սրբութիւն: Ան պէտք է Աստուծոյ կրակն ու երկիւղը ունենայ իր մէջ, որպէսզի հաւատքի մղումով կարենայ իմաստութեամբ աստուածճանաչման ճանապարհին հետևիլ: Սաղմոսերգուն կ'ըսէ, "Երկիւղ Տեսուն է սկիզբն իմաստութեան" (*Սղմ. 9:10*):

Յիսուս, երբ Թովմաս Առաքեալի հարցումը լսեց, որ ըսաւ, "Տէր, չենք գիտեր ու՞ր կ'երթաս, ուրեմն ինչպէ՞ս կրնանք գիտնալ ճանապարհը", պատասխանեց անոր, "Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը: Ոչ ոք կրնայ Հօրը գալ, բացի ինձմով: Եթէ զիս ճանչնայիք ապա կը ճանչնայիք նաև Հօրս. այսուհետև կը ճանչնաք անոր եւ տեսաք անոր" (*Յով. 14:5-7*): Ահաւասիկ, աստուածտեսութեան

Ճանապարհը. Քրիստոս Ինքը եղաւ եւ է Ճանապարհը. ան որ զԻնք ընդունեց՝
Նայրը ընդունեց եւ “Անոնք որ ընդունեցին զայն՝ Իշխանութիւն տուաւ անոնց
ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք կը հաւատան իր անունին” (Յով. 1:12):
Շարունակելով Իր խօսքը, Յիսուս ըսաւ Փիլիպպոսին, “Ով որ զիս տեսաւ՝ Նայրը
տեսաւ. իսկ դուն ինչպէ՞ս կ’ըսես թէ՛ ցոյց տուր մեզի Նայրը” (Յով. 14:9-10):

Աստուած երբ նախախնամեց, որ Որդին մարմնանայ եւ մարդանայ, ընտրեց Սբ.
Կոյս Մարիամին: Անոր մէջ տեսաւ մաքուր սիրտ ու հոգի եւ շնորհեց անոր, որ
զԻնք տեսնէ: Աստուածածինը դարձաւ պատկեր եւ օրինակ սրբութեան եւ
անբծութեան. ան ոչ միայն մարմնով ու սիրտով մաքուր էր, այլ յատկապէս
հոգիով: Երբ Սբ. Կոյսը հրեշտակին միջոցաւ ընդունեց Սուրբ Նոգւոյն շնորհը,
առանց երկմտանքի ըսաւ, “Ահաւասիկ, ես կը մնամ Տիրոջ աղախինը, ... Իմ անձս
կը փառաւորէ Տիրոջը եւ իմ հոգիս ցնծաց իմ Փրկիչ Աստուծով, որովհետեւ ան իր
հայեացքը դարձուց իր աղախինին խոնարհութեան վրայ” (Ղուկ. 1:38,46,48): Ս.
Մարիամը Աստուծոյ հանդէպ իր ունեցած երկիւղին եւ խոնարհութեան
պատճառով դարձաւ Աստուածածին, եւ իր ննջումէն յետոյ, արժանի եղաւ
վերափոխութեամբ երկնքի արքայութիւնը մտնել Աստուածորդւոյն
առաջնորդութեամբ:

Սբ. Գրիգոր Նիւսացին կ’ըսէ, “Այն մարդը, որ իր հոգւոյն աչքերը կը մաքրէ,
անմիջապէս պիտի հաճոյանայ Աստուծոյ տեսիլքով” (Նիւսացի, Երանիներու
մասին, քարոզ 2): Իսկ Պօղոս Առաքեալ Տիմոթէոսին ուղղած իր նամակին մէջ
կ’ըսէ, “Եթէ մէկը ինքզինքը մաքրէ անպատիւ բաներէ, կ’ըլլայ պատուաւոր անօթ՝
սրբագործուած եւ պիտանի իր Տիրոջը, պատրաստուած բոլոր բարի գործերու
համար: Երիտասարդական ցանկութիւններէն փախիր ու զնայ արդարութեան,

հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, արբութեան ետևէն անոնց հետ, որոնք Տիրոջ անունը կը կանչեն մաքուր սիրտով՝ (2 Տիմոթ. 2:21-22):

5 Փետ. 2008

Վարդան Զինյ. Ջուլֆայեան